



# Սյունյաց Երկիր

ՆԱԲԱԹ, 29 ԱՊՐԻԼԻ 2017Թ.  
№ 18 (436)

www.syuniacyerkir.am

*Միրահարը սիրո հրով թե՛ չվառվի,  
ի՞նչ սիրահար,  
Գիշերն անքուն ցողերի հեղ թե՛  
չարքավի, ի՞նչ սիրահար,  
Նավը ու հովից յարի մասին  
հարցմունք չանի, ի՞նչ սիրահար,  
Միրով վառված, ձորերն ընկած յա՛ր  
չկանջի, ի՞նչ սիրահար:  
Էն հազարան աստղերը թե՛ չողողան,  
երկինքն ի՞նչ է,  
Օրերն առանց լուսաբացի, կրակների  
զարթոնքն ի՞նչ է,  
Միրողը թե՛ սրբամորմոք փաղեր չասի,  
սիրելն ի՞նչ է,  
Մերը գաղտնի մոմի նման թե՛  
չվառվի, ի՞նչ սիրահար:*

ԳՈՒՄԱՆ ԱՇՈՏ



## «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության 2017թ. 1-ին եռամսյակի արտադրական արդյունքների մասին

ԹՅ ԱձԹՀ ՆՅ ԾձՆ<sup>13</sup> . ռձՁԱՁՁԿ

**ՀՀ փնտեսական զարգացման և ներ-  
դրումների նախարարության և «Սյու-  
նիք ազատ փնտեսական գոտի» ՍՊԸ-ի  
միջև ապրիլի 19-ին կնքվեց ՀՀ Սյունիքի  
մարզում ազատ փնտեսական գոտու  
կազմակերպման պայմանագիրը, որը  
ստորագրեցին նախարար Սուրեն Կարա-  
յանը և ՍՊԸ-ի փնտեսական տնօրեն  
Ղուկասյանը:**

Պայմանագրի առարկան են Հայաս-  
տանի Հանրապետության Սյունիքի մարզի  
Ազարակ քաղաքային, Կարծեան գյուղա-  
կան համայնքների և Արաքս գետով պար-

փակված տարածքում ստեղծված գյուղատն-  
տեսության, մշակող արդյունաբերության,  
էլեկտրականության մատակարարման, մեծա-  
ծախ առևտրի, փոխադրումների և պահես-  
տային տնտեսության, մասնագիտական և  
տեխնիկական գործունեության, մշակույթի,  
զվարճությունների և հանգստի ոլորտներում  
արտադրարդյունաբերական և լոգիստիկ  
ԱՏԳ կազմակերպման, ԱՏԳ ենթակառուց-  
վածքների ստեղծման և զարգացման, կազ-  
մակերպչի կողմից ծառայությունների մա-  
տուցման, այդ ծառայությունների սակագների  
սահմանման, ներդրումների իրականացման,  
ԱՏԳ շահագործողների ներգրավման և ԱՏԳ

գործունեության հետ կապված այլ իրավահա-  
րաբերությունները:  
Մեկնարկը նախատեսված է 2017 թվակա-  
նի հոկտեմբերի կեսերին: Կազմակերպչի կող-  
մից առաջին փուլում կիրականացվեն շուրջ 10  
մլն դոլարի ներդրումներ, իսկ ազատ տնտե-  
սական գոտում գործունեության ընթացքում  
ակնկալվում է, որ կներգրավվի շուրջ 120 շա-  
հագործող ընկերություն, որոնք կիրականաց-  
նեն 350-400 մլն դոլարի ներդրումներ, կստեղ-  
ծեն ավելի քան 2500 նոր աշխատատեղ, իսկ  
միջին տարեկան արտահանումը կլինի շուրջ  
80-100 մլն դոլար:  
**19 ապրիլի 2017թ. mineconomy.am**

## Զինծառայության երկու ծրագիր

**ՀՀ պաշտպանության նախարար Վի-  
գեն Սարգսյանը հանդես է եկել բանա-  
կում արմատական փոփոխությունների  
առաջարկներով:**

Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մար-  
զահամերգային համալիրում կազմակերպված  
«Ազգ-բանակ-2017» խորագիրը կրող համա-  
ժողովի ընթացքում նա ներկայացրեց երկու  
ծրագիր, որոնցից մեկը ստացել է «Պատիվ ու-  
նեն» պայմանական անվանում, իսկ երկրորդը  
կոչվում է «Ես եմ»:  
Այսպիսով, նախատեսվում է լուծել նաեւ  
պարտադիր զինվորական ծառայությու-  
նից տարկետման իրավունքի հարցը, որը  
չարչրկվում էր երկար ժամանակ ու շարունակ  
մտածվում էր, թե ում տրվի այդ իրավունքը և  
ուն՝ ոչ: Այժմ առաջարկվում է բանակից տար-  
կետում ստանալու հնարավորություն ընձեռել  
միայն այն ուսանողներին, ովքեր նախապես  
կպարտավորվեն մասնակցել «Պատիվ ունեն»  
ծրագրին:  
Իսկ դա, ինչպես ներկայացրեց Վիգեն

Սարգսյանը, նախատեսում է հետեւյալը. «Պա-  
տիվ ունեն» ծրագրում ընդգրկված ուսանող-  
ները, սովորելով քաղաքացիական բուհում,  
երկրորդ կուրսի սկզբից մինչեւ չորրորդ կուր-  
սի առաջին կիսամյակը ներառյալ՝ յուրաքան-  
չյուր շաբաթ օրը, Վազգեն Սարգսյանի անվան  
ռազմական համալսարանում այցելելու են  
զինվորական պատրաստության դասընթաց:  
Այդ ուսուցումը հաջող անցնելու և քաղաքա-  
ցիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում  
քաղաքացին բակալավրի աստիճան ստա-  
նալուն զուգընթաց կստանա լեյտենանտի  
սպայական կոչում և երեք տարի ժամկետով  
ծառայության կանցնի զինված ուժերում: Ծա-  
ռայությունը կազմակերպվելու է քաղաքա-  
ցիական մասնագիտությունը հաշվի առնելով,  
բայց բոլոր դեպքերում՝ առաջնագծում: Նրան  
առաջարկվելու է նաեւ ամսական 260 հազար  
դրամ աշխատավարձ:  
Զինվորական ծառայությունը բարեհաջող  
ավարտելու դեպքում տվյալ սպային տրվելու  
է լրացուցիչ ֆինանսական բոնուս՝ իր ուսում-  
նառության տարիների ուսման վարձի չափով:



Իսկ եթե զինծառայությունից հետո նա ընդուն-  
վի մագիստրատուրա, նաեւ փոխհատուցվելու  
է նրա մագիստրոսական կրթությունը:  
Ինչ վերաբերվում է «Ես եմ» ծրագրին,  
ապա պաշտպանության նախարարը տեղե-  
կացրեց, որ այն նորակոչիկները, ովքեր ցան-

կություն կհայտնեն ծառայությունն անցնել  
մարտական հերթափոխություն իրականաց-  
նող զորամասում, իրավունք կստանան անց-  
նելու ծառայության նոր տեսակի՝ ժամկետա-

# Կապանի լեռնահարստագման կոմբինատի ընդլայնում է հանրության հետ երկխոսության գործիքակազմը

Հարցազրույց «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Վահրամ Ավագյանի հետ

Արդեն մեկ տարի է, ինչ Կապանի լեռնահարստագման կոմբինատի սեփականատերերը ռուսաստանյան «Պոլիմետալ»-ն է: Նոր սեփականատերը, բնականաբար, կոմբինատը կառավարում է շրջապատի հետ կոմբինատի հարաբերությունները համակարգում է իր կանոններով ու սկզբունքներով: Մեր ընթերցողին այս համարները կան հարակից համայնքների հետ առողջ երկխոսություն ծավալելու և փոխըմբռնման մթնոլորտ ստեղծելու տեսանկյունից, ինչ է արվել այդ ուղղությամբ և ինչ է նախատեսվում տեսանկյունից ապագայում: Այդ հարցերի շուրջ զրույցի հրավիրեցինք ընկերության գլխավոր տնօրենի՝ հասարակայնության հետ կապերի և սոցիալական քաղաքականության գծով տեղակալ Վահրամ Ավագյանին:

– Պարոն Ավագյան, Կապանի լեռնահարստագման կոմբինատը, կարելի է ասել, Կապանի գլխավոր գործատունն է: Կապան քաղաքում և մերձակա գյուղերում քիչ ընտանիքներ կան, որոնք առնչություն չունեն այս ձեռնարկության հետ: Դա պարտավորեցնում է ունենալ հանրության հետ փոխգործակցության արդյունավետ մեխանիզմներ: Ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվում և ի՞նչ գործիքներ է կիրառում ընկերությունը հանրության հետ մշտական ու անկեղծ գործակցություն



ապահովելու համար:

– «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն «Պոլիմետալ» խմբի անդամ է և առաջնորդվում է խմբի որոշումներով: Գործունեության բոլոր տարածքներում կենսագործող սկզբունքներով: Գործունեության տեղեկատվական բաժանման կազմակերպումը, մեր համոզմամբ, ժամանակակից գործարարության անբաժանելի ատրիբուտ է, նախապայման: 2016թ. վերջին Կապանի ԼՀԿ-ում ներդրվել է շահագրգիռ կողմերի հետ փոխգործողության կանոնակարգ: Դա համալիր փաստաթուղթ է, որը համակարգում է հարակից համայնքների ազգաբնակչության, հասարակական կազմակերպությունների և ընդհանրապես ընկերության գործունեության հետ առնչվող որևէ շահ կամ հետաքրքրություն ունեցող բոլոր անձանց հետ ընկերության փոխհարաբերությունները: Կանոնակարգով սահմանված են նաև շահագրգիռ հանրության հետ փոխգործողության կոնկրետ գործիքներ՝ տեղեկատվական կենտրոնը, Կապանի քաղաքապետարանում և

հարակից համայնքների վարչական շենքերում տեղեկատվական ու հետադարձ կապի ցուցատախտակները և հետադարձ կապի արկղերը, միասնական հեռախոսահամարը և միասնական էլեկտրոնային հասցեն, որոնք մշակված են նաև ցուցատախտակներին, նախատեսվում է հարցախոյզների անցկացում, շահագրգիռ հանրության ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներ և այլն:

– Այդ ցուցատախտակներն, իհարկե, նկատել ենք, դրանք փակցված են քաղաքապետարանի և վարչական շենքերի առավել տեսանելի ու շահեկան մակերեսներին: Սակայն տեղեկատվական գերարագ հոսքերի, համացանցի դարաշրջանում որքանով է արդյունավետ իրազեկման այդ միջոցը:

– Արձագանքելով մակերեսների շահեկան լինելու մասին ակնարկին՝ նախ մշեմ, որ մինչև համայնքների վարչական շենքերում իրազեկման

էջ 4

## Զինծառայության երկու ծրագիր

էջ 1 յին պայմանագրային: Ծառայությունը կտեւի երեք տարի, սակայն դրանցից գումարային յոթ ամիսը զինծառայողը կանցկացնի ազատ արձակման մեջ՝ սկսած վեցերորդ ամսվանից, երբ իր ստորաբաժանումը կստանձնի մարտական հերթապահությունը՝ յուրաքանչյուր ամիս ծառայելով 1+1+2 բանաձևով: Այսինքն՝ մեկ շաբաթ՝ արձակուրդում, մեկ շաբաթ՝ գործնական պատրաստվելով մարտական հերթապահության, և երկու շաբաթ՝ առաջնագծում՝ մարտական հերթապահություն անցկացնելիս:

Յուրաքանչյուր անգամ արձակուրդ գնալիս զինծառայողին կվճարվի որոշակի գումար՝ արձակուրդային ծախսերը հոգալու համար: Ծառայության ավարտին նրա անձնական հաշվին կփոխանցվի շուրջ 5 մլն ՀՀ դրամ, որը գործարկված զինծառայողը կկարողանա օգտագործել նպատակային երեք ծրագրերից մեկում՝ 1-ին՝ մատչելի բնակարան (սուբսիդավորված հիփոթեքային ծրագիր), 2-րդ՝ մինի-ֆերմա (գյուղաբնակ զինծառայողների համար փոքր ջերմոց կամ ֆերմա ստեղծելու

կամ փոքր գյուղտնտեսական ձեռք բերելու ծրագիր) և 3-րդ՝ ուսման վարձի փոխհատուցում:

Նախատեսվում է, որ ծրագիրը կլինի այլընտրանքային: Այսինքն՝ քաղաքացին կարող է ընտրել զինծառայության կամ այդ տարբերակը, կամ այն, որը գործում է ներկայումս: «Պատիվ ունեն» և «Ես եմ» ծրագրերը, այսպիսով, ներկայացվեցին հանրային քննարկման: Վիզեն Սարգսյանը նշեց, որ դրական արձագանք ունենալու դեպքում կարծում է՝ մինչև սեպտեմբեր դրանք իրավական նորմատիվ փաթեթների տեսքով կներկայացվեն նոր գումարման Ազգային ժողով:

Միջոցառման օրը պաշտպանության նախարարը չպատասխանեց լրագրողների հարցերին: Նախարարության խոսնակ Արծրուն Հովհաննիսյանից փորձեցինք պարզել՝ կա՞ նախնական հաշվարկ, թե՞ վերոնշյալ ծրագրերը կյանքի կոչելու դեպքում ինչ միջոցներ են պահանջվելու ու նաև հետաքրքրվեցինք, թե ինչ աղբյուրներից են դրանք ստացվելու: Հովհաննիսյանը պատասխանեց, որ հստակ ոչինչ ղեռնու ասել չի

կարող, բայց և նշեց. «Այդ ծրագրերը կունենան իրենց բյուջետային համապատասխան հողվածները՝ համապատասխան կարգով: Մնացած մանրամասնությունները դեռ կքննարկվեն»:

**Հ.Գ. «Ազգ-բանակ-2017» համաժողովի մասնակիցների թվում էին դպրոցների տնօրեններ ու նաև նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցիչներ: Վիզեն Սարգսյանը վերջիններիս խնդրանք-պահանջները կարգադրեց, որ շրջանավարտ ունեցող յուրաքանչյուր դպրոց ամեն տարի ռազմաուսուցման հաստատությունների պետք է տա առնվազն մեկ դիմորդ: «Ես խնդրում եմ հիմնականից ֆիքսեք դա: Դուք ստանալու եք քարոզչական նյութեր, պատասխան՝ դպրոցում ամրացնելու համար բուկլետներ: Մենք պետք է հստակ արդյունքը տեսնենք և ձեր աշխատանքը նաև դրանով կկարողանանք գնահատել», - հայտարարեց նա:**

**ԱՆՆԱ ԶԱԽԱՌՅԱՆ**  
**«ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»**

## Մարզխորհրդի հերթական նիստը

Ապրիլի 26-ին Սյունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ մարզխորհրդի նիստը, որը վարում էր մարզպետ Վահե Հակոբյանը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի և Սյունիքի մարզպետի 2016թ. գործունեության մասին ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռուդոլֆ Սարգսյանը: Կատարված աշխատանքների, մարզի վիճակի ընդհանուր համապատկերին մարզում շարունակվում է գերակա խնդիր մնալ զբաղվածության, նոր աշխատատեղերի ստեղծման և բնակչության բարեկեցության աճի ապահովումը: Բանախոսը նաև նշեց, որ զգալի աշխատանքներ են իրականացվում մարզի զարգացման և ներդրումների նորաստեղծ հիմնադրամի միջոցներով, այն է՝ հասարակական տրամադրության գործունեության սուբսիդավորում, դպրոցաշինական ծրագրերի իրականացում, բազմաբնակարան շենքերի տանիքների և վերելակների նորոգում, բակերի կառուցապատում և խաղահրապարակների ստեղծում, ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների ընտանիքներին ամենամսյա նպաստի տրամադրում, մարզամշակույթային տարբեր միջոցառումների անցկացում և այլն: Ասվածին մարզպետը հավելեց, որ Կապանի օդանավակայանի կառուցապատման և վերականգնման աշխատանքները նույնպես իրականացվում են հիմնադրամի միջոցներով, իսկ 2017թ. կատարվելիք աշխատանքների մասին հետագայում ավելի մանրամասն կներկայացվի:

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքման 2017թ. առաջին եռամսյակի արդյունքների և խնդիրների մասին խոսեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Սուսաննա Դավթյանը: Նա ներկայացրեց 2017թ. առաջին եռամսյակի համայնքային բյուջեների կատարման ընթացքի ընդհանուր պատկերը, այն է՝ համայնքների 2017թ. բյուջեներով նախատեսվել են 4 մլրդ 636 մլն 469,7 հազար դրամ եկամուտներ, այդ թվում՝ սեփական եկամուտներ՝ 1 մլրդ 566 մլն 264,7 հազար դրամ: Եռամսյա ժամանակահատվածում նախատեսված 308 մլն 990,7 հազար դրամի դիմաց սեփական եկամուտների փաստացի հավաքումը կազմել է 354 մլն 92,9 հազար դրամ կամ նախատեսվածի 114,6%-ը, որ 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելի է 15 մլն 391,3 հազար դրամով, սեփական եկամուտների աճը կազմել է 4,5%:

Ս.Դավթյանը նշեց, որ չնայած արձանագրված դրական ցուցանիշներին, այնուամենայնիվ նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտների հավաքման մվազ աճ է արձանագրվել մարզի 40 համայնքում: Վարչության պետը ներկայացրեց նաև առանձին եկամտատեսակների գծով մարզի համայնքների բյուջեների ընդհանուր պատկերը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը ներկայացրեց զարման գյուղատնտեսական աշխատանքների ընթացքն ու խնդիրները: Տարեկան կատարված գույքագրման, անասնապահության և հողօգտագործման բնագավառներում հաշվառման աշխատանքների արդյունքներից նկատվում է թե՛ խոշոր և թե՛

մանր եղջերավոր անասունների գլխաքանակի, ինչպես նաև աշնանացան, գարնանացան մշակաբույսերի ցանքատարածությունների, բազմամյա տնկարկների նվազում: Շարունակվում են պարարտանյութերի, սերմացուների՝ մարզ ներկրման, ինչպես նաև մկների դեմ պայքարի աշխատանքները: Սկսվել են ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված վարկերի տրամադրման, լիզինգային եղանակով գյուղտնտեսության և գյուղգործիքների ձեռքբերման աշխատանքները: Ի դեպ, տվյալ համայնքի գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորված վարկերի չափի վերաբերյալ հարց բարձրացրեց Տաթև Բազմաբնակավայր համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը: Իսկ ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ հարց հնչեցրեց Շաբե համայնքի ղեկավար Վահան Դազարյանը:

Գյուղվարչության պետը տեղեկացրեց նաև, որ հակահամաճարակային կայուն իրավիճակ ապահովելու, ինչպես նաև բնակչության ու կենդանիների շրջանում ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխարգելելու նպատակով «Գյուղացիական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում սկսվել են բուրգելոզի, դաբաղի, սիբիրախտի, նոդուլյար մաշկաբորբի, խշխշան պալարի ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումները: Յայտարարեց շրջանում անասունների տեղաշարժի ժամանակ հնարավոր վարակներից զերծ մնալու համար այս տարի նախատեսվում է ուժեղացված հսկողություն սահմանել սահմանային այն հատուկ կետերում (Գորիսում՝ 2, Կապանում՝ 2), որտեղով կատարվելու է անասնափոխառու և նախիրների շարժը: Ի դեպ, յայտարարեց ոչ պատշաճ օգտագործման վերաբերյալ իր մտահոգությունը հայտնեց Գորայք խոշորացված համայնքի ղեկավար Առուստամ Առուստամյանը, իսկ Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Չաքարյանը նշեց, որ Մեղրու տարածաշրջանում նույնպես կան ազատ արտավայրեր, որոնք կարող են օգտագործել անասնատերերը:

Սասնաբերդի վաճառքի կետերում ուժեղացված հսկողություն սահմանելու համար մարզի քաղաքներում ստեղծվել են փորձաքննության լաբորատորիաներ:

Մարզի համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական (վարչական) հսկողության արդյունքների մասին ներկայացրեց ՏԻ և ՀԳԱՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը: 2017թ. առաջին եռամսյակում ուսումնասիրություններ են իրականացվել մարզի վեց համայնքում (Աճառում, Արծվանիկ, Նորաշենիկ, Ներքին Խոտանք, Երկաթուղի, Գորիս): Վարչության պետը ըստ բնագավառների ներկայացրեց հիմնական բացթողումներն ու խախտումները, որոնք արձանագրվել են ուսումնասիրված համայնքներում: Ի դեպ, 2016թ. երրորդ և չորրորդ եռամսյակում իրականացվել են վարչական հսկողության աշխատանքներ մարզի 13 համայնքում (Չախմի, Սեւաքար, Տանձավեր, Օխտար, Անտառաշատ, Սպանդարյան, Կարճեան, Թասիկ, Լժեն, Նորավան, Վաղատին, Որոտան և Տոլորս):

Մարզպետը նշեց, որ բոլոր համայնքներում կանցկացվի համապատասխան աուդիտ և առաջարկեց կարճ ժամկետում վերացնել առկա թերություններն ու օրենքի սահմաններում գործունեություն ծավալել:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Մարզի գյուղատնտեսական հողերի 40 տոկոսը չի մշակվում»

Զրույց մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանի հետ

– Պարոն Խաչատրյան, սա «Այունյաց երկիր» էջերում մեր անդրանիկ զրույցն է Ձեզ հետ՝ նոր կարգավիճակում, առաջին անգամ ենք Ձեզ ներկայացնում, ուստի խմբագրակազմը շնորհավորում է եւ հաջողություններ մաղթում:

– Ընդհանրապես եմ:  
– Մեր մարզը որքան էլ մեծ կշիռ ունի հանրապետության տնտեսության մեջ, խոսքը լեռնահանքային արդյունաբերության մասին է, այնուամենայնիվ, համարվում է խոշոր գյուղատնտեսական մարզ: Եվ քանի որ հանդիպել ենք մի ժամանակահատվածում, երբ զարմանազանի շրջան է, չենք կարող նախ հարց չուղղել՝ կապված գարնան գյուղատնտեսական աշխատանքների հետ: Ինչպե՞ս կբնութագրեք վիճակը:

– Մարզում կատարվել է 10500 հեկտար աշխատանք՝ նախորդ տարվանից յոթ հազարի չափով պակաս: Ուսումնասիրությունները պարզել են, որ ձմռան սեզոնում աշխատանքը չի տուժել, աշխատանքն դաշտերում կազմակերպվել է մկների դեմ պայքար: Կառավարության կողմից 132 կգ մկնդեղ է հատկացվել մարզի համայնքներին, այդ թվում՝ Մեղրուն, Կապանի եւ Գորիսի հարավային համայնքներին, որտեղ մկների շարժ է նկատվել ըստ մոնիտորինգի արդյունքների: Երկրորդ փուլով մկնդեղ կհատկացվի մյուս համայնքներին: Եվ համընդհանուր

ՍԱՄՔԵՐԱՆ

Ծնվել է 1957թ. Սյունիքի մարզի Շաղատ գյուղում: 1981թ. գերագնացության դիմումով ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-հիդրոտեխնիկի որակավորում: 1981-1987թթ. աշխատել է ՀԼԿԵՄ Սիսիանի շրջկոմի, շրջխորհրդի գործկոմի եւ ՀԿԿ Սիսիանի շրջկոմի կազմակերպական բաժնիներում՝ հրահանգիչ: 1987-1991թթ. եղել է Շաղատի կոլտնտեսության վարչության նախագահ: 1993-1994թթ. Սիսիանի շրջխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալն էր, 1994-1997-ին աշխատել է Դաստակերտի «Բուժտեխնիկա» ՓԲ ընկերության փոխտնօրեն: 1997-2000 թվականներին «Աննա-Ա» անհատական ձեռնարկության գործադիր տնօրենն էր: 2000 թվականից Սյունիքի մարզի սերմ արտադրողների միության



տնօրենն է: 2016թ. նոյեմբերի 28-ին նշանակվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար:

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է, երկու տասնյակից ավելի գիտական հոդվածների եւ հացահատիկային մշակաբույսերի 14 նոր տարի հեղինակ: Ամուսնացած է, ունի երեք զավակ:

պայքար կիրակնացվի մկնամման կրծողների դեմ:  
Ասեմ, որ գարնան-գյուղատնտեսական աշխատանքները մեր մարզում, բնակլիմայական պայմաններով պայմանավորված, համեմատաբար ուշացումով ենք սկսել, բայց, այնուամենայնիվ, այս պահի դրությամբ (հարցազրույցը կայացել է ապրիլի 14-ին, խմբ.) կատարվել է մոտ 2000 հա գարնանացան, իսկ

պետության կողմից հատկացված հացահատիկային մշակաբույսերի սերմացուի, պարարտանյութերի բաշխումն ընթանում է բնականոն հունով:  
– Կարո՞ղ ենք այսօր ասել, որ գյուղացին զոնե հացահատիկային մշակաբույսերի սերմացուով ապահովված է:  
– Այս տարի մի քիչ ուշացավ, բայց սերմացուն տեղ է հասել, սեր-

մացուի պակաս չկա: Մարզի սերմ արտադրողների միությունն էլ սերմացուի պաշարներ ունի՝ գարնանացան ցորենի, գարու, կորնգանի, ամլույտի, համարի, թեյե կառավարության տրամադրած սերմացուից մի քիչ քանակ է: Սերմացուի պահանջարկը հունվարին ուսումնասիրելիս պարզվել է, որ մարզի հողօգտագործողներին անհրաժեշտ է 100 տոննա գարի, 50 տոննա գարնանացան ցորեն:

Այս պահի դրությամբ, մինչդեռ, նշված սերմարանքի 50 տոկոսի համար են գյուղացիները հայտ ներկայացրել:  
– Իսկ պարարտանյութերի բաշխման առնչությամբ ի՞նչ կփոխանցեք:  
– Նոր սկզբունք է մշակվել, ըստ որի համայնքը ցուցակագրում եւ

էջ 6

## Օրակարգում արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովումն է

Ապրիլի 21-ին Կապանի քաղաքապետարանում փոքր ունեցավ ՀՀ-ում արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ներդրման (ԱԾԹՆ) վերաբերյալ հանդիպում-քննարկում, որին մասնակցում էին ՀՀ կառավարության, տարածաշրջանի հանքարդյունաբերական ձեռնարկությունների, տարբեր հի-ների ներկայացուցիչներ, ազդակիր համայնքների ղեկավարներ եւ այլք: Հանդիպման նպատակն էր ներկայացնել ԱԾԹՆ-ի էությունը եւ Հայաստանում դրա ներդրման գործընթացը, հետագա գործողությունների ծրագիրը:



Ողջունի խոսքով հանդես եկավ Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը, որից հետո ներկայացան ԱԾԹՆ բազմաշահառու խմբի (ԲՀԽ) անդամները:  
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱԾԹՆ) բնական պաշարների բաց եւ հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին անդամակցում է 51 երկիր (23.02.2016թ. դրությամբ):  
ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության

ուղրտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ Լուսինե Թովմասյանը ներկայացրեց ԱԾԹՆ-ի նպատակը, տարբեր երկրներում դրա շնորհիվ արձանագրած դրական փոփոխությունները, Հայաստանում ԱԾԹՆ-ի ներդրման գործընթացը եւ այլն:  
ՀՀ ԱԾԹՆ թեկնածության հայտը ներկայացվել է 2016թ. դեկտեմբերի 28-ին, իսկ 2017թ. մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած ԱԾԹՆ-ի միջազգային խորհրդի նիստի ժամանակ ՀՀ-ին

շնորհվեց ԱԾԹՆ թեկնածու երկրի կարգավիճակ:  
ՀՀ-ն պետք է հրապարակի երկրի առաջին ԱԾԹՆ-ի զեկույցը 18 ամսվա ընթացքում, որը կկազմվի անկախ կազմակերպության կողմից: Ձեկույցում կներկայացվեն երկրում մետաղական հանքարդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների 2016-17թթ. ֆինանսական տվյալները, այն է՝ ռոյալթիներ, եկամտահարկ, շահութահարկ, գույքահարկ, բնապահպանական եւ այլ տեսակի վճարներ, տարեկան

արտադրության ծավալները, ինչպես նաեւ ազդակիր համայնքների զարգացման ուղղված տվյալ մարզում իրականացվող սոցիալական-տնտեսական ծրագրերը եւ այլն: Ի դեպ, սկզբնական շրջանում նախաձեռնությունը կընդգրկի Հայաստանի միայն մետաղական հանքարդյունաբերությունը:  
Հայաստանի ԱԾԹՆ ԲՀԽ-ն կազմված է կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, որի անդամների ընդհանուր թիվը 15 է, այդ թվում՝ 6 պետական գերատեսչությունների ներկայացուցիչ, 4 հանքարդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչ, 4 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ եւ 1 գիտության ոլորտի ներկայացուցիչ, խմբի նախագահն է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը: ԱԾԹՆ ԲՀԽ-ն պատասխանատու է ԱԾԹՆ-ին միանալու գործընթացի կառավարման համար, որի առաջնային նպատակն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության ԱԾԹՆ-ում ներգրավվելու թեկնածությունը, այնուհետեւ՝ ԱԾԹՆ-ին համապատասխանությունը: ԲՀԽ երեք կողմն իրավահավասար է, որոշումները կայացվում են ընդհանուր համաձայնությամբ՝ կոնսենսուսով:  
Քաղաքապետարանում տեղի ունեցած քննարկումն ընթացավ ակտիվ մթնոլորտում, բազմաշահառու խմբին ուղղված հիմնական հարցադրումները վերաբերում էին ԱԾԹՆ-ի

գործընթացին, ԲՀԽ-ի ձեւավորմանը, ծրագրի միջոցով համայնքների զարգացմանը նպաստելու հավանականությանը, ինչպես նաեւ ծրագիրը ձախողելու դեպքում հնարավոր ռիսկերին եւ այլն:  
Ինչպես հավաստիացնում են կառավարությունից, սա կնպաստի երկրի տնտեսական աճին, ներդրումների ծավալների ավելացմանը, առավել բաց եւ թափանցիկ հանքարդյունաբերական գործունեություն ծավալելուն, այդ թվում՝ հանքարդյունաբերական ընկերությունների իրական շահույթը, ինչպես նաեւ իսկական սեփականատերերին բացահայտելուն: «Երկրի բնական պաշարները, ինչպիսիք են՝ նավթը, գազը, մետաղները եւ հանքային նյութերը, պատկանում են հանրությանը: Այդ պաշարների արդյունահանումը կարող է ապահովել տնտեսական աճ եւ սոցիալական զարգացում: Սակայն, բնական պաշարների վատ կառավարումը հաճախ հանգեցնում է կոռուպցիայի եւ հակամարտությունների: Արդյունահանող ոլորտի հանրային հարստության օգտագործման եւ կառավարման բաց եւ հանրային վերահսկողությունն անհրաժեշտ է, որպեսզի բնական պաշարներն օգուտ բերեն բոլորին», - նշված է կառավարության կայքում:  
Նշենք նաեւ, որ ծրագրի գործընկերներն են Համաշխարհային բանկը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը Հայաստանում, ՀՀ-ում բրիտանական դեսպանատունը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Շինուհայրի ավազն ամենաորակյալն է հանրապետությունում

**Սյունիքը հարուստ է շինանյութերով, եւ մարզի բնակավայրերի կառուցապատման, արդյունաբերական ու սոցիալական նշանակության օբյեկտների շինարարության մեջ օգտագործվում են հիմնականում փրեզիկան շինանյութերը, այդ թվում՝ ավազը:**

Դեռեւս անցյալ դարի 60-ական թվականներից գործում է Շինուհայրի ավազահանքը:

1959 թվականին Մոսկվայից՝ ԽՍՀՄ էներգետիկայի նախարարության գիտահետազոտական ինստիտուտի կենտրոնական լաբորատորիայից մասնագետների խումբ էր ժամանել Հայաստան՝ ուսումնասիրելու տարածաշրջանի ավազահանքերը: Իրենց հետ տարած ավազի նմուշներն ուսումնասիրելուց հետո եկան եզրակացության, որ դարի կառույց Տաթևիկի շինարարության համար նպատակահարմար է օգտագործել Շինուհայրի ավազահանքի ավազը: Այդպես էլ

եղավ: Այդ ավազն են օգտագործել նաև «Ապանդարյանի» ու «Շամբեկը», հիդրոկայանների ամբարտակի պատնեշները կառուցելիս:

Պատմում են, որ ավազահանքի տեղում, Հայաստանի ղեկավար Սուրեն Թովմասյանի նտաիզացմամբ, պիտի հանգստի գոտի կառուցվեր, բայց քանի որ տեղանքի ավազը հաջող քննություն էր բռնել որպես լավագույն շինանյութ, գործարկվեց ավազահանքը:

Գործում հայտնի շինարար, վաստակաշատ Խասան Հարությունյանը վկայում է, որ Տաթևիկի 18 կիլոմետրանոց թունելի 14,5 կիլոմետրը «Տաթևիկի շինում» է կառուցել, հիդրոտեխնիկական այդ կարևոր կառույցի շինարարության մեջ, ինչպես նաև ամբարտակները կառուցելիս, օգտագործվել են Շինուհայրի ավազն ու խիճը, բացի դրանից, Տաթևիկին զուգահեռ կառուցվել են Որոտանի եւ Շինուհայրի բանավանները՝ սոցիալական ու մշակութային նշանակության օբյեկտների

հետ մեկտեղ:

– Շինուհայրի ավազով 380 մակնիշի բետոն կարելի է ստանալ, միջին ծանրության, մեկ խորանարդ մետրը 1800-1900 կգ, – ներկայացնում է Խասան Հարությունյանը եւ հավելում, որ Շինուհայրի ավազի առավելությունը նրա ծակոտկենությունն ու մաքրությունն է: Ասում է նաև, որ հիդրոէլեկտրակայանի մասնաշենքն իր ղեկավարած կազմակերպությունն է կառուցել՝ շինարարության մեջ ժամանակավորապես օգտագործելով Սիսիանի ավազահանքի ավազը, որը, սակայն, կիրառվել է մաղելուց ու վլանալուց հետո, ինչը չես ասի Շինուհայրի ավազի պարագայում:

2010 թվականից Շինուհայրի ավազահանքի շահագործումը վստահված է Վալերիկ Ասրյանին («Ավչի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն): Մեր հանդիպման ընթացքում նա ներկայացրեց թվական տվյալներ. Շինուհայրի ավազահանքն ընկերությանն է հանձնված 50 տարի ժամանակով, 9,8 հեկտարի վրա ուսումնասիրություն է կատարվել, 2,5 հեկտարի հաշվով ունի արդյունահանման լիցենզիա (արտոնագիր): Ինքն էլ է հիշում, որ Տաթևիկի շինարարության տարիներին ավազահանքից օրական 100 մեթրնա էր դուրս գալիս ավազով բեռն-



Վալերիկ Ասրյան

ված, միայն Գորիսի երկաթբետոնյա կառուցվածքների գործարանն օրական 10-12 մեթրնա ավազի պահանջարկ ուներ...

Ո՞րն է Շինուհայրի ավազահանքի արտադրանքի առավելությունը մյուսներից. Շինուհայրի ավազը միանգամից մտնում է բետոնախառնիչի մեջ: Գորիսի Վարարակն գետի ավազն էլ են շինարարության մեջ օգտագործում, բայց այն հողային խառնուրդ է պարունակում, եւ պիտի ջրով լվաս ու ջարդիչով անցկացնես, որից հետո պիտանի կլինի շինարարության համար:

Խոսելով շինանյութի առաջնա աշխարհագրության մասին՝ Վալերիկ Ասրյանը փոխանցում է, որ ժամանակին Գորիս քաղաքի 60-70 տոկոսը, գյուղերի մեծամասնությունը կառուցապատվել է Շինուհայրի ավազով: Այդ ամենը տնօրենի աչքի առաջ է տեղի ունեցել: Պաշտպանության նախարարության օբյեկտների շինարարության համար եւս նախապատվությունը տվել են Շինուհայրի ավազին:

Վալերիկ Ասրյանը ծնվել է 1953 թվականին Շինուհայր գյուղում, 1980թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1971-1973թթ. ծառայել է խորհրդային բանակում, 1974 թվականին սովորել եւ ավարտել է Գորիսի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո 1978թ. օգոստոսից աշխատել է Շինուհայրի ռետինե կոշիկների գործարանում՝ մինչեւ 1993թ. արհկոմի նախագահ, այնուհետեւ փոխտնօրեն՝ մինչեւ 1998 թվականը, որից հետո՝ մինչեւ այժմ ձեռնարկատիրությամբ է զբաղվում: Երեք տարի է, ինչ ղեկավարում է «Ավչի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Վալերիկ Ասրյանը նկատում է, որ ավազանքի հեռավորությունը մայրաքաղաքից ու հանրապետության կենտրոնական շրջաններից բարձրացնում է իրենց արտադրանքի (խիճ, երեք տեսակի ավազ) գինը, ուստի մտադրություն կա բեռնատար ավտոմեքենա ձեռք բերել՝ շինանյութի առաքումը սեփական միջոցներով կատարելու համար: Ինչ վերաբերում է շինանյութի սակագներին, սովորական ավազի մեկ խորանարդ մետրի գինը 1500 դրամ է, խիճը՝ 2000 դրամ, միջին մեծության ավազի խորանարդ մետրը 3000 դրամ է, իսկ ամենամանր ավազը, որ օգտագործվում է ծեփի համար՝ 3500

դրամ: Գործում է նաև զեղչերի համակարգ, մեծ խմբաքանակների դեպքում՝ 500, երբեմն 1000 դրամ (մեկ խորանարդ մետրի հաշվով):

Հանրապետությունում հայտնի «Հորիզոն-95» շինարարական ընկերության գլխավոր տեխնոլոգ եւ լաբորատորիայի վարիչ Հասմիկ Գեւորգյանը, ով Տաթևիկ վանքի վերականգնողական աշխատանքների նյութաբանական հարցերով պատասխանատուն է, պատմում է, որ ռեստավրացիոն աշխատանքների շրջանակում ուսումնասիրել են Սյունիքի տարածաշրջանի Տաթևիկ, Գորիսի, Կապանի, Սիսիանի հանքավայրերի ավազը եւ եկել հանդգնման, որ Շինուհայրի ավազահանքի ավազը հաջողությամբ կարելի է օգտագործել թե՛ բետոնային աշխատանքներում, թե՛ շաղախներ պատրաստելու մեջ, բայց պիտի գրագետ օգտագործել՝ հաշվի առնելով նրա ծակոտկենությունը, ջրակլանման հատկությունը, կապակցանյութը՝ ցեմենտը, պորտլեմը ցեմենտ, թե՛ օդային կիր: Մեր զրուցակիցը փոխանցեց, որ 1970-ական թվականներին Տաթևիկ վանական համալիրի վերականգնման ժամանակ բետոնային աշխատանքներում հիմնականում օգտագործվել է Շինուհայրի ավազը:

Արդ, ի՞նչ հեռանկար ունի Շինուհայրի ավազահանքը: Ներկայումս, ավազ, տարեկան մոտ 11 մլն դրամի շրջանառություն ունի ընկերությունը: Բայց ավազի, խիճի իրացման ծավալներն անհամեմատ կանգն, եթե, օրինակ, «Հյուսիս-հարավ» մայրուղու՝ Սյունիքի տարածքով անցնող հատվածի շինարարությունը սկսվի: Տնօրենին նույնիսկ փոխանցել են, որ չի հասցնելու ավազ մատակարարել, քանզի եւ խիճը, եւ ավազն առավել նախընտրելի են այդ ճանապարհի կառուցման համար եւս:

Շինարարության մի այլ հասցե է Նորավանի կառուցվող ենթակայանը, որի տնօրենը Շինուհայրի ավազահանքից ավազի նմուշներ է տարել լաբորատոր փորձաքննության. նրան այդտեղ ասել են, որ իրենց լաբորատորիան այդպիսի լավորակ ավազ չի մտել:

Այնպես որ՝ մասնագետները խորհուրդ են տալիս՝ առավել որակյալ եւ հուսալի շինարարություն իրականացնելու մտադրության դեպքում միայն ու միայն օգտագործել Շինուհայրի ավազը: **ՎԱՐՄԱ ՕՐԲԵՆԱՆ**

## Կապանի լեռնահարստացման կոմբինատն ընդլայնում է հանրության հետ երկխոսության գործիքակազմը

Էջ 2 եւ հետադարձ կապի միջոցներ տեղակայելն այդ գաղափարը ներկայացրել ենք համայնքների ղեկավարներին եւ մանրամասն քննարկել նրանց հետ: Նախաձեռնությունը ողջունել եւ իրագործմանն ամեն կերպ աջակցել են բոլոր համայնքների ղեկավարները: Ակնհայտ է համայնքների ղեկավարների կողմից այն բանի արժեւորումը, որ մեր նախաձեռնությունն առաջին հերթին հենց համայնքի շահերից է բխում:

Ի հարկե, արդյունավետության եւ օպերատիվության տեսանկյուններից ցուցատախտակները չեն կարող մրցակցել համացանցի եւ տեղեկատվության այլ թվային կրիչների հետ, սակայն մենք խնդիր ունենք ընդգրկելու շահագրգիռ հանրության բոլոր տարրերին: Իսկ հատկապես գյուղական համայնքներում, ինչպես գիտեք, մեծ թիվ են կազմում մարդիկ, ովքեր հնարավորություն

չունեն համացանցից կանոնավոր օգտվել եւ նույնիսկ նման հնտություններ չունեն: Միեւնույն ժամանակ ընկերությունը կանոնավոր մշտադիտարկում եւ թարմացում է ցուցատախտակների տեղեկատվությունը, վերցնում հետադարձ կապի արկղերի պարունակությունը:

**– Ինչպե՞ս են շահառուները ընդունում այդ նորամուծությունը, ի՞նչ հարցեր եք ավելի շատ ստանում, կա՞ն դեպքեր, երբ հարցումը վերաբերում է այնպիսի բանի, որ հրապարակման ենթակա չէ, կամ պատասխան են պահանջում այնպիսի ժամկետում, որ հնարավոր չէ ապահովել:**

– Իրագրվածն են հետադարձ կապի միջոցներ ընկերությունում գործել են նաև մինչ «Պոլիմետալի»-ի կողմից ձեռք բերումը: Մասնավորապես՝ ընկերությունում նաև նախկինում է գործել համապատասխան կառուցվածքային ստորաբա-

ժանում՝ հասարակայնության հետ կապերի բաժին, որը կորդինացրել է հանրության հետ փոխգործողությունը եւ այդ թվում՝ համակարգել նաև տեղակատվական կենտրոնի աշխատանքը: Մենք մաքուր թրթից չենք սկսել, այլ՝ ձգտել ենք պահպանել արդեն արվածի դրական կողմերը եւ զարգացնել եղածը «Պոլիմետալ»-ի սկզբունքներին համահունչ: Շահառուների հանրությունն, ըստ ամենայնի, ներդրված նոր համակարգն ընկալում է որպես ընկերության հետ երկխոսության հնարավորությունների բնական էվոլյուցիա, ոչ թե որպես հեղափոխական նորամուծություն:

Ուրախությամբ կարող ենք ընդգծել, որ շահագրգիռ հանրությունն այս համակարգը չի ընկալում իբրեւ բացառապես օգնության խնդրանքներ կոմբինատին ներկայացնելու միջոց, թեւ դրանք, ի հարկե, քիչ չեն: Ստանում ենք նաև շահագրգիռ տեղեկատվական հարցումներ, համագործակցության առաջարկներ եւ այլն:

Մենք ցանկացած պարագայում պատասխանում ենք շահագրգիռ կողմի հարցմանը: Այնպիսի դեպքերում, երբ հարցումը ենթադրում է առեւտրային գաղտնիքի հրապարակում, մեր տրամադրած տեղեկատվության մեջ պահպանում ենք գործունեության թափանցիկության եւ անհրաժեշտ գաղտնիության ողջամիտ հավասարակշռություն: Ինչ վերաբերում է ժամկետներին. ձգտում ենք պատասխանել նվազագույն ժամկետներում եւ պատասխանի պատրաստման համար օբյեկտիվորեն պահանջվող ժամանակից ավելի չենք ուշացնում մեր արձագանքը:

**– Ի՞նչ նոր քայլեր եք պատրաստվում անել, որոնք կնպաստեն հանրության հետ Ձեր երկխոսության զարգացմանը:**

– Առաջիկայում նախատեսում ենք կազմակերպել համդիպումներ շահագրգիռ կողմերի տարբեր խմբերի հետ: Հանդիպումները կազմակերպվելու են պարբերաբար՝ միտված լինելով ընդգրկելու հանրության հնարավորինս լայն շրջանակներ: Այս հարցում եւս ակնկալում ենք համայնքների ղեկավարների աջակցությունը, մասնավորապես՝ շահագրգիռ կողմերի պատշաճ ներգրավվածություն եւ մասնակցություն ապահովելու մասով:

**– Ի՞նչն է ստիպում շահույթ հետապնդող կազմակերպությանը միջոցներ ծախսել հանրության հետ երկխոսության մեխանիզմ-**

**ներ ներդնելու եւ դրանք աշխատեցնելու ուղղությամբ, ի՞նչ կերպ կարող են այդ ծախսերը հատուցվել:**

– «Պոլիմետալ»-ը տարածաշրջանում երկարաժամկետ տնտեսական ծրագրեր ունի, իսկ երկարաժամկետ հեռանկարում ոչ ոք չի կարող արդյունավետ տնտեսվարել մի սոցիալական միջավայրում, որն իրեն խոր է, որի հետ չի երկխոսում: Գործունեության տարածքի համայնքների հետ հարաբերություններում սոցիալապես պատասխանատու գործելակերպը, ընկերությանը դիմելու, պատասխան ստանալու հնարավորության ապահովումը, բաց եւ թափանցիկ գործունեությունը, ծրագրեր կազմելիս համայնքի կարիքներն ու մոտեցումները հաշվի առնելը՝ որպես շահագրգիռ հանրության հետ աշխատանքի գործուն մեխանիզմներ, մեզ համար նույնքան կարևոր են, որքան արտադրության գերժամանակակից միջոցներ ներդնելն ու շրջակա բնական միջավայրի համար անվտանգ արտադրություն կազմակերպելը:

**Զրույցը՝ ԱՐՄԻՆԵ ԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**





## Մեկնարկեց Գուսան Աշոտի 110-ամյակին նվիրված միջոցառումների շարքը

**Ապրիլի 25-ը Գուսան Աշոտի ծննդյան օրն է. լրացավ աշուղական երգի մեծ երախտավորի 110-ամյակը:** Նրա հիշատակը ոգեկոչեցին ծննդավայր Գորիսում. Գուսանի՝ քաղաքին իշխող բլրին ամփոփված շիրմին ծաղիկներ դրեցին Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Աղունցը, համայնքային իշխանության, Գորիս քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, գուսանի արվեստի երկրպագուներ:

ասաց «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ով մասնավորապես նշեց. «Գուսան Աշոտը դեռևս 5-րդ դարում Մովսես Խորենացու հիշատակած Գողթան գավառի գուսանների նորոտյա շառավիղն էր: Գուսան Աշոտը հայոց միջնադարյան քնարերգուների, տաղասացների եւ հատկապես Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի տաղերով ու խաղերով, հայրեններով, ինչպես եւ հոգեւոր շարականներով սնված ու ոգեշնչված անհատականություն էր:

լյան մեծանուն երաժիշտ-կատարողն անվանեց «Ամենայն հայոց գուսան»:

Գուսանի երգերը, անշուշտ, իր ժամանակաշրջանի ծնունդ են: Բայց նույն այդ երգերի մեծ մասը ճեղքել է ժամանակի պատեղն ու սահմանները եւ հորդել-հոսել դեպի ապագան՝ պահպանելով արդիականությունը, հուզականությունը: Եվ այսօր վերստին փաստում ենք՝ Գուսանի երգերն իրոք որ անմահ են, այդ երգերից շատերն իրենց մնայուն տեղն ունեն հայոց ժողովրդական գանձերի շարքում»:

Այնուհետև հանդիսություն տեղի ունեցավ Գորիսի մշակույթի կենտրոնի առջեւի պուրակում, որտեղ Աշոտի հուշարձանի պատվամրանին ծաղիկներ դրեցին տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ: Գնահատանքի խոսքեր ասվեցին 20-րդ դարի երգարվեստում մնայուն հետք թողած Գուսան Աշոտի մասին: Ներածական խոսքով հանդես եկավ Գորիսի մշակույթի կենտրոնի աշխատակցուհի Նառա Մինասյանը: Այնուհետև ընդգրկվում խոսք

Նա հայոց առաջին աշուղների, հատկապես Նաղաշ Հովնաթանի ժառանգորդ վերջին եւ ամենաբարձր գազաթն էր, վեհափառը:

Սայաթ-Նովայի սիրերգության անօրինակ շարունակողն էր:

Ինքն էր խոստովանում. «Ձեռքիս թասը ավանդական քո հին թասն է, Սայաթ-Նովա»:

Ինքն էր այն միակն ու բացառիկը, ում ժամանակակիցներն անվանեցին «20-րդ դարի Սայաթ-Նովա»:

Ինքն էր, ում Հովհաննես Բաղա-

Վերջում Գորիսի մշակույթի կենտրոնի Գուսան Աշոտի անվան ժողգործիքների անսամբլի մենակատար Արթուր Ղազարյանը եւ Մարուսյա Նուրիջանյանը կատարեցին Գուսանի երգերից:

Ապրիլի 25-ի հանդիսությանը սկսվեց Աշոտ Հայրապետի Դաղալյանի (Գուսան Աշոտի) 110-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

**ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Հաղթող ճանաչվեց Գորիսի թիմը

**Ապրիլի 27-ին Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապարտեզական մարզադպրոցում տեղի ունեցավ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված 1-3-րդ դասարանների աշակերտների միջև սպորտ-լանդիայի մարզային փուլը, որի կազմակերպման եւ անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում էր Սյունիքի մարզպետարանը: Ինչպես տեղեկացրեց մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը, միջոցառումն անց է կացվում հանրապետությունում երկրորդ, իսկ Սյունիքի մարզում՝ առաջին անգամ: Մինչ մարզային փուլը տեղի է ունեցել համայնքային փուլը, որի կազմակերպման եւ անցկացման աշխատանքներն իրականացրել են համայնքապետարանները:**

հաղթող ճանաչված թիմը, բնականաբար, կմասնակցի հանրապետական փուլին, եւ համոզված եմ՝ ըստ պատշաճի կներկայացնի մեր մարզը»: Ի դեպ, հանրապետական փուլը տեղի կունենա մայիսի 11-13-ն ընկած ժամանակահատվածում:

Բաժնի պետը տեղեկացրեց նաեւ, որ մրցավարական կազմը հիմնականում Քաջարանից է, քանի որ ի սկզբանե այս միջոցառումը պետք է անցկացվեր Քաջարանում՝ պայմանավորված Դ.Համբարձումյանի անվան մարզադպրոցում իրականացվող վերանորոգման աշխատանքներով, բայց քանի որ նախատեսվածից ավելի շուտ ավարտվեցին այդ աշխատանքները, որոշվեց այստեղ անցկացնել՝ չփոխելով մրցավարական կազմը: Հետագայում հնարավոր է՝ այլ վայրում անցկացվի միջոցառումը, կամ փոխվի մրցավարական կազմը, բայց, Ս.Դավթյանի հավաստմամբ, հնուտ մրցավարական կազմ է ընտրվել, որ այդ ոլորտում փորձ ունի եւ մշակված կանոններին լիարժեք տիրապետում է:

1-3-րդ դասարանների աշակերտներից հավաքական սկզբունքով ձևավորված հինգ թիմ՝ մարզի տարբեր քաղաքներից (Կապան, Քաջարան, Գորիս, Սիսիան, Մեղրի), իր ուժերը չափեց հինգ մրցաձևում, այն է՝ խաղային փոխանցակազմ, փոխանցակազմ արգելքների հարթահարումով, փոխանցակազմ մարմնամարզական օղակներով, վարժություն մանկական եռանկյվ հեծանվով եւ օլիմպիական խորհրդանշի հավաքում:

Հինգ մրցաձևի ընդհանուր արդյունքներով 1-3-րդ դասարանների աշակերտների միջև սպորտլանդիայի մարզային փուլի հաղթող է ճանաչվել Գորիսի թիմը, երկրորդ եւ երրորդ մրցանակային տեղեր են գրավել համապատասխանաբար Քաջարանի եւ Կապանի թիմերը: «Սպորտլանդիան անց է կացվել ազնիվ ու արդար մրցապայքարում. նախեստառջ պետք է գիտակցենք, որ գործ ունենք երեխաների հետ եւ չի կարելի հուսախաբ անել նրանց», - ամփոփեց բաժնի պետը:

Սպորտլանդիայի առաջին փուլում մրցանակային տեղ զբաղեցրած թիմերը պարգևատրվել են ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության, համայնքային ղեկավարների համապատասխան 140 հազար դրամ, 120 հազար դրամ եւ 90 հազար դրամ արժողությամբ): Սարգիս Դավթյանի խոսքով. «Այս սպորտլանդիան նախեստառջ առողջ սպորտակերպի, սպորտի հանդեպ սեր արթնացնելու խորհուրդ ունի: Մարզային փուլում

Ի դեպ, հավելենք, որ սպորտլանդիան անց է կացվում նաեւ 4-7-րդ դասարանների աշակերտների միջև եւ նպատակն է անհատի բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ սպորտակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի դերի բարձրացում, ինչպես նաեւ դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձեւավորում:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Համո Սահյան.

### «Բարի աչքով նայես, Աստված Իմ այս մի բուռ Հայաստանին»

**Բանաստեղծի գրական ժառանգությունը լավ պատկերացնելու համար պիտի լինես նրա հայրենիքում: Համո Սահյանի ծննդավայր Լոր գյուղ գնալիս՝ հայրենիքում ես նրա բանաստեղծության աշխարհում Ջորջոր, Որոտան գետ, Գյազբեյ, Որոտնավանք, Որոտնաբերդ, Դարբասի ձոր, Լորագետ Ողջ բնաշխարհն ասես շնչում է Համո Սահյան բանաստեղծի էությունը, նրա նկարագրած քարափների երգով:**

տեղի ունեցավ Լորի միջնակարգ դպրոցում: Բեմի խորքում Սահյանի մեծադիր նկարն էր եւ պոետի խնդրանքն առ երկնի տիրակալ.

*Շատ եմ տեսել այլուս ու ցալ, Ինչ կլինի այսուհետև*

*Բարի աչքով նայես, Աստված, Իմ այս մի բուռ Հայաստանին:*

Սիսիանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները եւ Լորի կրթօջախի դպրոցականները հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ: Եկրանից տարածվեց Համո Սահյանի ասմունքը:

Միջոցառման ավարտից հետո եղանք բանաստեղծի նորոգ տուն-թանգարանում, որ մարդաշատ էր, մանավանդ Սիսիանից ժամանած դպրոցականներով: Մեկը հանպատրաստից երգում է Սահյանի բանաստեղծության տողերով ստեղծված մի երգ: Մթնոլորտն ավելի անմիջական է դառնում: Տնօրեն Քնքուշ Հարությունյանից հետաքրքրվում ենք, թե որքանով է տուն-թանգարանը համարվում նոր ցուցանմունքներով. «Համոզված եմ, թե Համո Սահյանը ծնվել է 21-րդ դարում, էլի մասրենի կերպեր, դադձի ծաղիկ բույրը կտարածեր իր տողերով, ապուպապոտ տողեր կստեղծեր, հայրենի եզերքի, քա-



Ապրիլի 14-ին լրացավ քնարերգուի ծննդյան 103-րդ տարեդարձը, եւ պատեհ առիթը չէր կարող «Սյունյաց երկրին» Լոր չհասցնել: Անբարենպաստ եղանակի պատճառով բանաստեղծի տուն-թանգարանի բակում կայանալիք միջոցառումը

Սահյանի պոեզիայի գլխավոր հերոսը Հայաստանն էր, - այսպես իրենց մեծ հայրենակցի գրական ժառանգությունը բնորոշեցին աշակերտները: Հիշատակի խոսք ասաց Լոր համայնքի ղեկավար Դավիթ Առուստամյանը: «Անցել

են տարիներ, բայց Լորը նույնն է, նույն սարերն են, նույն հոգսաշատ մարդիկ, միայն Սահյանը չկա, նրա հայրական կիսավեր տունն այժմ մի գեղեցիկ շինություն է, որ փորձում ենք նրա շնչով լցնել: Իր բանաստեղծություններով Սահյանը աշխարհին ճանաչել տվեց իր ծննդավայրը, շատերի մեջ ցանկություն ծնվեց տեսնել Լորը, նրա սարերն ու քարափները, Լորագետը: Որքան էլ լինենք, ապրելու ենք Սահյանի շնչով, նրա պոեզիայի գուլալ ու վճիտ ակունքներում»:

րափների լույսը կտարածեր: Շնորհակալ ենք եղիչե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանին, որ մեզ նյութեր է հատկացրել իր պահուստային ֆոնդից: Կուզեի, որ թանգարանի ցուցադրանքը համարվեր ձեռագիր մասունքներով, մարդիկ կան, ովքեր Սահյանի ձեռագրերից ունեն, բայց ասում են՝ հարա-

զատ մասունքներ են, չենք կարող դրանցից բաժանվել: Այնուամենայնիվ, թեեւ դանդաղ, բայց թանգարանի ֆոնդը համարվում է»:

Հրապարակումը ցանկանում ենք ավարտել լորեցիների ձեւակերպմամբ՝ ծնունդը շնորհավոր, քարափների դեսպան:

**ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Մարզի գյուղատնտեսական հողերի 40 տոկոսը չի մշակվում»

Եջ 3

Ներկայացնում է պահանջարկը: Պարարտանյութերի գները մնացել են նույնը, ազոտական պարարտանյութի մեկ պարկի գինը՝ վեց հազար դրամ, ֆոսֆորական պարարտանյութինը՝ յոթ հազար դրամ: Կա սահմանափակում՝ երեք հեկտարի համար մեկ տոննայի չափով յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը, իսկ ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերինը՝ անսահմանափակ քանակությամբ:

**– Ասես նախորդ տարիներին կալիումական եւ ֆոսֆորական պարարտանյութերի մասին խոսք չկար:**

– Այժմ այդ պարարտանյութերը բավարար չափով մարզ են ներկրվել: Այլ է բանը: Ժողովուրդը դրանք հավասարաչափ չի օգտագործում: Այդ խնդիրը պիտի լուծենք: Բույսին հատկապես անհրաժեշտ են եւ կալիումական, եւ ֆոսֆորական, եւ ազոտական պարարտանյութեր: Երեք տարրն էլ հավասարապես անհրաժեշտ է բույսին: Չգիտեմ ինչու, հողի մշակները նախապատվությունը միակողմանի տալիս են ազոտական պարարտանյութին, որ չի կարող լիարժեք բերքատվություն ապահովել: Նաեւ ասեմ, որ այս տարվա համար կառավարությունը մեկ պարկ ազոտական պարարտանյութի հաշվով հազար դրամ է սուբսիդավորել: Նախորդ տարվա երեք հազար դրամի փոխարեն: Փորձում ենք կառավարության առջեւ հարց բարձրացնել՝ խնայված միջոցների հաշվին եւ ֆոսֆորական, եւ կալիումական պարարտանյութերի գինն իջեցնել՝ չորս-հինգ հազար դրամի հասցնելով, որ հողօգտագործողի համար մատչելի լինի երեք տեսակի պարարտանյութի օգտագործումը:

**– Իսկ գյուղացին նախապես պիտի վճարի այդ ասեմի համար:**

– Այո, ինչպես նախորդ տարիներին: Բայց պիտի նշել, որ բավականին շուշափելի է կառավարության օգնությունը: Գարու սերմացուն, օրինակ, կառավարությունը ներկրում է 280 դրամով, հողօգտագործողին հատկացնում՝ 130 դրամով:

**– Վառելիքի հատկացման վերաբերյալ ի՞նչ կփոխանցեք:**

– Նախընտրական քարոզարշավի շրջանում հանրապետության վարչապետի՝ Սյունիք կատարած այցի ժամանակ դիվանագիտի սուբսիդավորման մասին հարց բարձրացվեց. նախ՝ Գորայքում, հետո՝ Սիսիանում եւ Գորիսում: Մայրաքաղաք վերադառնալուց հետո վարչապետը հանձնարարեց մնալ սուբսիդավորում նախատեսել: Ծրագիրն արդեն գյուղնախարարությունը ներկայացրել է կառավարություն, հարցն այդտեղ քննարկվելուց հետո մրցույթ կհայտարարվի: Մինչ այդ կառավարությունը ֆիքսել է սուբսիդիայի գինը՝ 280 դրամ մեկ լիտրի հաշվով, մնացել է ուժի մեջ անցած տարիների գինը, արդեն որոշում ստացել ենք դրա հետ կապված, մնում է մրցույթով ճշտվի հաղթող մատակարար կազմակերպությունը:

**– Մի բանի խոսքով ներկայացրեք, խնդրեմ, բանջարաբուստանային մշակաբույսերի սերմացուի ապահովվածության վիճակը:**

– Բանջարաբուստանային մշակաբույսերը մեր մարզում այդքան տարածում չունեն, կարողա՞նք սերմացուի պահանջարկ կա, որն էլ Յուլանդիայից անհրաժեշտ չափով ներկրում ենք: Ասեմ, որ այդ սերմացուի պահանջարկը նախորդ տար-

վա համեմատ նվազել է:

**– Հաճելի է լսել, որ մարզում սերմացուի պակաս չկա, բայց գյուղացին կանխիկ դրամի խնդիր ունի: Մինչդեռ, գյուղակրկերի տրամադրման հարցում էլ ամեն ինչ պարզ ու հստակ չէ:**

– Դա ընդհանուր ցավ է, մյուս կողմից էլ անասնապահական մթերքների իրացումը խնդրահարույց է: Թե մարզում, թե հանրապետությունում ունենք գյուղմթերքների իրացման շուկայի խնդիր: Տեղեկացնեմ, որ ծրագիր ենք մշակել, ըստ որի պիտի հաշվառենք գյուղմթերքների առաջարկն ու պահանջարկը: Այսպես, համայնքն իր տեղեկությունները կենտրոնացնում է Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրումների հիմնադրամում՝ էլեկտրոնային ձևով, մենք ընդամենը մարզի կտրվածքով ֆիքսում ենք մեր ունեցած գյուղմթերքների տեսականոցն ու մտածում իրացման պայմանագրեր կնքելու մասին: Հիմա միս իրացնելու նպատակով արաբերություններ են հաստատվել Իրանի հետ՝ գառան եւ ոչխարի մսի հետ կապված անորոշություն չկա, մեր վերջին հանդիպման ժամանակ իրանական կողմը խոշոր եղջերավոր անասունի միս ներմուծելու պահանջ ներկայացրեց:

**– Այնուամենայնիվ, գյուղացին ի՞նչ հույս ունի, որ ոչխարի եւ խոշոր եղջերավորի միսը գոնե այս տարի իրացվելու է:**

– Դա մի շաբաթում, մի ամսում լուծվող խնդիր չէ: Արդեն մշտնջող մշակել ենք մեխանիզմ՝ ճշտելու, թե ինչ ունենք մարզի տարածքում, որի իրացման նպատակով հիմնադրամ ուղիներ կփնտրի պայմանագրեր կապելու Ռուսաստանի Դաշնության, Պարսկաստանի, Չայաստանի մյուս մարզերի հետ: Ստեղծվելիք ազատ տնտեսական գոտին նույնպես կնպաստի գործին: Նաեւ տեղեկացնեմ, որ կառավարության որոշում կա, որի համաձայն 2017-ից մասնաբերված սառեցված ձեւով պիտի շուկա դուրս գա, իսկ մինչ այդ կարգադրություն ենք ստացել՝ բոլոր հանրային օբյեկտներին սառեցված միս մատակարարել, թարմ միս արգելվում է մատակարարել հանրային սննդի օբյեկտներին: Իրավիճակը հրամայաբար թելադրում է, եւ մարզպետի հետ խնդիրը քննարկել ենք, որ Սիսիանում ու Գորիսում մեկական մոթի արտադրամաս ունենանք՝ սպանդանոցներ՝ սառնարանային տնտեսության հետ մեկտեղ: Պաշտպանության նախարարի հետ էլ պայմանավորվածություն է եղել, որ մարզում տեղակայված գործարարների մսի ու բանջարեղենի մատակարարման հարցն էլ մենք լուծենք: Դա կատարվելու է մրցույթների միջոցով՝ գյուղակրկերի վերահսկողության ներքո:

**– Բոլորս հիշում ենք, որ մի քանի տարի առաջ ոչխարը կենդանի վիճակով տեղափոխում էին Իրանի Իսլամական Հանրապետություն, որը շահեկան էր գյուղացու համար: Այդ գործընթացն անհասկանալիորեն կանգ է առել: Իրականում գործընթացին ինչ-որ բան խանգարում է, թե՞...**

– Այդ ժամանակ ոչխարն արտահանվում էր նաեւ Արաբական Միացյալ Էմիրաթներ: Հիմա պարսիկները դեմ են ոչխարի խմբաքանակն իրենց տարածքով դեպի այլ երկիր տեղափոխելուն: Հարցը միջպետական մակարդակով լուծում է պահանջում: Կարծում եմ՝ ժամանակի

ընթացքում խնդիրը կլուծվի: Կարելու է այն է, որ այդ երկրներում մեր ոչխարի մսի պահանջարկը կա: Մենք էլ սպասում ենք հարցի լուծմանը: 60 հազար դրամով ոչխար էինք իրացնում ժամանակին, հիմա՝ 30 հազար դրամով չենք կարողանում: Ինչ վերաբերվում է ոչխարի բրդի իրացմանը, Սյունիքի մարզպետը նախընտրական քարոզարշավի շրջանում հայտարարեց, որ մտադրություն կա վերականգնել տրիկոտաժի արտադրությունը Սյունիքում, ինչի համար հունք կծառայի ոչխարի բուրդը: Նախատեսվում է բրդի մթերման եւ մշակման մի կետ ստեղծել Սիսիանի տարածաշրջանում, մեկն էլ՝ Տեղ համայնքում: Մթերված բրդի մի մասը կօգտագործվի տրիկոտաժեղենի արտադրության մեջ, մի մասն էլ կառաքվի Իրան:

**– Ներող եղեք ընդհատելու համար, բայց այս տարի գյուղացին կկարողանա՞ բուրդը մթերել, թե՞ Ձեր ասածն առայժմ ծրագիր է:**

– Դա առայժմ մտահղացում է, ոչխարի խուզը սկսվում է մայիս-հունիսին, մենք արդեն հայտարարել ենք, որ գյուղացիները բուրդը չթափեն, դա արդեն գին ունի, պահեստավորեն, միուցե աշնանը կամ ձմռան ամիսներին իրացումը կատարվի:

**– Կաթի մթերումն էլ հարցերի հարցն է՝ այլեւս չխոսելով այն մասին, որ կաթի գինը գիշում է անգամ շաշվակած ջրի գնին:**

– Սյունիքը, մանավանդ Սիսիանի տարածաշրջանը, հայտնի է անասնապահական մթերքների, հատկապես կաթի արտադրությամբ: Իտալական մի խոշոր ընկերության հետ պայմանավորվածություն ենք ձեռք բերել. իտալական ավանդական ուտեստների ֆաբրիկա պիտի կառուցվի Սյունիքում, ընդ որում՝ ուտեստներն ամբողջությամբ կարտահանվեն Ռուսաստան: Ուտեստների մեջ օգտագործվում է մեծ քանակությամբ պանիր, ինչի արտադրության համար պիտի ավելացնել կաթնարտադրության ծավալները:

**– Դարձյալ պիտի ընդհատենք Ձեզ, որովհետեւ շատ կարելու հարց ենք շուշափում: Հիմա կաթի ոլորտում խնդիրը ոչ այնքան իրացում է, որ կաթ ընդունող չկա, այլ, ինչպես նշեցիք վերեւում, մթերող կազմակերպությունները կաթն ընդունում են ջրի գնով, այդ մասին է խոսքը:**

– Արդեն նշած իտալական ընկերության համար էական չէ պանիրը հինգ, տասը դրամ էժան կամ թանկ գնելը: Ընկերությունը մեծ ծավալով կաթ ընդունելով՝ գյուղացին շահեկան է, ամսական մոտ 40 տոննա «Մոցեռնա» տեսակի պանիր արտադրության մասին է խոսքը: Մի քանի գործարան պիտի աշխատի, կաթի արտադրությունը պիտի ավելացնենք, ինչի համար անասունների տոհմային բարելավման ուղղությամբ աշխատանքներ էլ պիտի տանենք:

– Այս օրերի համար մի շատ կարելու հարցի մասին եւս ուզում ենք բարձրաձայնել: Բոլորիս հայտնի է, թե ինչպես անցած տարի անասունների դաբաղ հիվանդությունը մի պահ գլուխ բարձրացրեց մարզում. պատճառն այն էր, որ ազատագրված տարածքներից հիվանդությունը փոխանցվեց մեր տարածաշրջան: Հիշում ենք՝ անասունը նախկինում յայլադներ տեղափոխելիս կանխարգելիչ ինչ միջոցառումներ էին իրականաց-

**վում: Կա՞ երաշխիք, որ այս տարի նորից անասունների՝ հարավից տեղափոխման ժամանակ հիվանդություններ չեն թափանցի մարզ:**

– Դուք անասնապահության ամենացավոտ հարցի մասին ասացիք, այդ վտանգը հիմա էլ կա: Պետպատվերի շրջանակում հինգ-վեց պրոֆիլակտիկ միջոցառում է նախատեսված ընդամենը, որի մեջ ներառված է նաեւ դաբաղը: Նաեւ տեղեկացնեմ, որ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար ամսական անասնաբույժին վճարվում է ընդամենը 15 հազար դրամ: Մյուս աշխատանքները կատարելու համար անասնաբույժին պիտի վճարի մենատնտեսը: Իսկ գյուղացիական տնտեսությունները ֆինանսապես այնքան էլ հզոր չեն, որ կարողանան անասնաբույժին վճարել: Խնդրել ենք մարզպետին, որ Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի միջոցներից անասնաբույժներին 30 հազարական դրամ հատկացվի: Մարզպետն ընդառաջել է: Տարեսկզբից գյուղապետերին հորդորում ենք, որ համայնքի բյուջեով անասնաբույժի հաստիք նախատեսեն, քանզի կարելու է նաեւ անասնաբույժի մատուցած ծառայությունը: Պետպատվերի շրջանակում արդեն կազմվել է անասունների հիվանդությունների դեմ պայքարի ժամանակացույցը, անասնաբույժները Մեղրուց մինչեւ Գորայք սկսել են պրոֆիլակտիկ աշխատանքները, կատարվել է նախատեսվածի մոտ 65 տոկոսը՝ բյուջեյով եւ դաբաղի ստուգման գծով: Այս պահին Սիսիանում հայտնաբերվել է մոտ տասը գլուխ, Գորիսում՝ տասներկու գլուխ վարակված անասուն: Դրանք վերահսկողության տակ են վերցվել անվտանգության ծառայության տեսուչների կողմից:

Խնդիրն այն է, որ այս պահին ազատագրված տարածքներում ունենք դաբաղի օջախներ, մանավանդ՝ Քաշաթաղի շրջանում: Խնդրո առարկայի առնչությամբ հեռախոսազրույց են ունեցել Արցախի Հանրապետության գյուղնախարարի, նրա տեղակալի, Քաշաթաղի վարչակազմի պատասխանատուների հետ: Առաջնահերթության կարգով դաբաղի դեմ պատվաստանյութ ուղարկել ենք ազատագրված տարածքներ, որտեղ ձմեռում է մարզի անասնազխաքանակի մի մասը: Բացի այդ, անասունների՝ դեպի անառային արտադրարներ տեղափոխելու պայմաններն ենք խստացրել, երկու անցակետ ենք հիմնել Խնձորեսկ եւ Տեղ գյուղերի սահմաններում: Անասնաբուժական ծառայություն է գործելու, ոստիկանական վերահսկողություն, եթե կանխարգելիչ միջոցառումներ չեն կատարվել, հետ չենք թողնելու: Ամեն ինչ կանոնակարգված է՝ ո՛ւր եւ գնում, պայմանագիր ունե՞ս, թե՞ չունես, անասնաբուժական միջոցառումներ արվե՞լ են, թե՞ ոչ:

**– Նաեւ արոտավայրերն արդյունավետ օգտագործելու խնդիր կա:**

– Գիշտ եք, մենք հսկայական տարածություն ունեցող արոտներ ունենք, որ չենք օգտագործում: Նաեւ պիտի հաշվարկենք՝ եթե մեր անասնազխաքանակը քիչ է, ապա այլ մարզերին որամարդե՞նք այդ արոտները, որ համայնքների համար լրացուցիչ եկամուտ ապահովվի: Միայն Շաղատ համայնքը 14,5 հազար հեկտար արոտ ունի, որի չորս հազար հեկտարն է օգտագործվում:

– Եվս մի հուզող հարցի մասին, որ բնավ էլ երկրորդական չէ, խոսքը գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության մասին է, որ, մեղմ ասած, չինժու է, հնարավոր, ինչը գյուղատնտեսության մասին իրական պատկերացում կազմելու տեղ չի թողնում:

– Երբ ինձ առաջարկվել է աշխատել այս պաշտոնում, առաջին արձագանքս այն էր, որ պիտի անցնենք իրական թվերին, որպեսզի պարզ լինի մարզի գյուղատնտեսության ոլորտում տիրող վիճակը: Առաջարկս հավանության է արժանացել: Արդյունքում՝ հաշվառել ենք մարզի անասնազխաքանակը. մոտ վեց հազար խոշոր եղջերավորի, 17 հազար մանրի գլխաքանակ է պակասել...

**– Հարցերի լայն շրջանակ քննարկվեց մեր գրույցի ընթացքում, բայց, այնուամենայնիվ, ո՞րն է մարզի գյուղատնտեսության ոլորտի ամենաթույլ օղակը:**

– Մասնագետների պակասը, համայնքի ղեկավարների ոչ կոմպետենտությունը: Դեմ ենք առնում մի պատմեջի, որից հետո չենք կարողանում հարցի լուծումն ավարտին հասցնել: Նույնիսկ կառավարության որոշումները չեն կարողում, չեն տիրապետում համակարգչային տեխնիկային, անընդհատ հեռախոսազանգերով հարցեր չես լուծի: Կարո՞ւյին հարցը բավականին սուր է դրված:

**– Բանի տարի է՝ ասվում է, որ տարին անբարենպաստ է գյուղատնտեսության համար: Իրո՞ք դա այդպես է:**

– Գիշտ ասած՝ ես այդպես չեմ կարծում, դե, բնությունն էլ իր անակնկալներն ունի: Մարզի հարավային բեւում ավարտել ենք գարնանացանը, պարարտանյութի վերջին խմբաքանակն է տեղ հասնում: Գարնանացան աշխատանքներ պիտի կատարվեն Գորիսի հյուսիսային եւ Սիսիանի հատվածներում: Սիսիանում գարնանացանն ուշացած չէ երբեք, ամեն ինչ բնականորեն ընթանում է, այնպես որ խուճապի մատնվելու կարիք չկա:

**– Պարոն Խաչատրյան, այս հարցը գուցե անմիջականորեն չի առնվում գյուղատնտեսությանը, բայց անտեսել չի կարելի. գյուղատնտեսությունը գյուղապահպանության մի բաղադրիչն է ընդամենը: Ցավոք սրտի, մարզի գյուղերի մեծամասնությունը հոգեվարք է ապրում, լեռնային գյուղերը դատարկվում են: Գյուղապահպանության գծով Դուք ծրագրեք, մտահղացումներ, մտքեր ունե՞ք:**

– Ես ճիշտ չեմ համարում այն, որ գյուղը պահպանելու համար անպատճառ այդտեղ արդյունաբերական արտադրություն պիտի հիմնել: Գյուղը պիտի գյուղատնտեսությամբ զբաղվի, առավելագույնը՝ վերամշակող ձեռնարկություն պիտի հիմնել գյուղում: Օրինակ, Կապանի գյուղերի վիճակն ահավոր ծանր է: Երեք ամսվա ընթացքում հասցրել են լինել Կապանի տարածաշրջանի գյուղերի 70 տոկոսում: Կարծում եմ՝ Կապանի գյուղերում պիտի զարգացնենք այգեգործությունը եւ հատապտուղների արտադրությունը, որովհետեւ հուլիսին Սյունիքի պահածոների գործարանը պիտի շահագործենք. կառավարությունն արդեն անհրաժեշտ գումարը հատկացրել է:

– Դուք հասցրե՞լ եք

# Նահապակ գինվորները «վերակենդանացել» էին պահապան հրեշտակների աղոթքներով

Լրացավ ապրիլյան քառօրյա պատերազմի մեկ տարին: Պատերազմ, որ տարբերվեց ազգամիջյան նախորդ պատերազմներից նրանով, որ առաջնագծում հերոսական պայքարի ելան մեր երիտասարդ գինվորները: 100-ից ավելի հերոս տղաներ մահացան ցուցաբերելով անձնագոհության, հայրենասիրության վառ օրինակ: Մահացան հերոսացած, միշտ կենդանի մեր հիշողություններում՝ մեզ հետ: Անմահության խորհրդի մտահղացմամբ էր պայմանավորված սգո տարելիցին նվիրված Գորիսի ՅՈՒ. Բախշյանի անվան հիմնական դպրոցի 7«բ» դասարանցիների հուզիչ միջոցառումը: Կորուստ, ափսոսանք, հպարտություն ամփոփող այս

զգացողությունները պարուրել են դահլիճը՝ հերոսների լուսանկարներով, վառվող մոմերով, խորհրդավորությամբ: Ահա գինվորները, որ «վերակենդանացել են» պահապան հրեշտակների աղոթքներով, իսկ պահապան հրեշտակները նույն դասարանի աղջիկներն էին՝ ճերմակ շորերով: Ձինվորական կյանքից առօրյա պատկերներ էին ստեղծում բեմի վրա, իսկ հերոսացած ու անմահացած տղաների հայացքները կարծես ուղեկցում են նրանց, ավելի ոգեւորում: Նրանք իրենց սրտաբուխ խոսքերով եւ հայրենասիրական երգերով փառաբանեցին հերոսներին: Հազար փառք հղեցին նրանց ու երգ-

վեցին լինել նրանց պես հայրենասեր ու քաջ: Տպավորիչ, գեղեցիկ ու հուզիչ այս միջոցառմանը իրենց աջակցություն են բերել դպրոցի տնօրեն Կարմեն Կարապետյանը, փոխտնօրեն Արմա Անտոնյանը, դասուղեկ Լյուդմիլա Գրիգորյանը, սցենարի հեղինակ, ծնող Աննա Հարությունյանը եւ կոլեկտիվի մյուս անդամները: Միջոցառմանը ներկա էին Գորիսի գինվորական կոմիսար, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը, ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի նախագահ Սուրեն Բաղդասարյանը: **ԹԵՐԵԶԱ ՍԱՅԱԿՅԱՆ 7«բ» դասարանի ծնող**

## Ճառապունկ Վահանավանքում

Ապրիլի 25-ին Վահանավանքի տարածքը համալրվեց նորանոր տնկիներով: Միջոցառումը նախաձեռնել էր «Հայաստառ» ՊՈԱԿ-ի Կապանի մասնաճյուղը: Ինչպես տեղեկացրեց մասնաճյուղի տնօրեն Գարիկ Միրզոյանը, անտառը ոչ միայն հատելու համար է, այլև պարբերաբար այնտեղ անհրաժեշտ է անտառապատման աշխատանքներ իրականացնել: Տնկիները տրամադրել է «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն, ինչի համար Կապանի անտառտնտեսության տնօրենը շնորհակալություն հայտնեց ընկերության տնօրեն Սեդր Գուրաբաբյանին, ինչպես նաև բնապահպանության բաժնի պետ Հասմիկ Սկրտունյանին:

դերը, տուրիզմի կենտրոն լինելը», - տեղեկացրեց Գարիկ Միրզոյանը եւ հավելեց, որ նախանցյալ տարի նույնպես կազմակերպվել էր ծառատունկ, եւ հաջողության դեպքում միջոցառումը շարունակական բնույթ կունենա: ՁՊՄԿ-ի տնկարանից տրամադրված 400 տնկին (վայրի տանձենի, խնձորենի, սալորենի, դեկորատիվ ծառատեսակներ) նախքան տնկելն օրինեց Վահանավանքի նորակարգ հողերի հովիվ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը, ով պատվիրեց սրբությամբ պահել եւ պահպանել մայր բնությունը՝ Աստծո ստեղծագործությունը: Ի դեպ, առաջին տնկին տնկելու պատի-



ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ուսանողներն ու Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի աշակերտներն անցան տնկիները մայր հողում դնելու գործին: Ինչպես նշեցին հրշեջ փրկարարները, նրանց աշխատանքը միայն անտառում հրդեհը մարելը չէ, այլև նոր ծառեր տնկելը: Գարիկ Միրզոյանի խոսքով՝ մենք պարտավոր ենք ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել անտառի պահպանմանը, իսկ նոր տնկած ծառերի խնամքը կիրականացնեն անտառտնտեսության աշխատակիցները, ինչպես նաև ցանկալի կլինե, որ Վահանավանքի կուրաբանչյուր այցելու ստանձնեք այդ գործի իր բաժինը: Գարիկ Միրզոյանը շնորհակալություն հայտնեց նաև «Վոլվար» ՄՊ ընկերության տնօրեն Վոլոդյա Թունանյանին՝ ծառատունկի մասնակիցներին սննդամթերքով ապահովելու համար: **ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



«Տարածքի ընտրությունը պատահական չէր. խորհրդակցելով մասնագետների հետ՝ ընտրեցինք համայնքին մոտ եւ անտառամերձ տարածք, ինչպես նաև հաշվի առնելով Վահանավանքի պատմամշակութային

վը տրվեց քահանային: Այնուհետև ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության աշխատակիցները, Սյունիքի ԵԿԿ ծրագրերի իրականացման գրասենյակի ներկայացուցիչները, ինչպես նաև

**Թ** հաշվառել այն գյուղական տնտեսությունները, որոնք, այնուամենայնիվ, իրենց սեփական հողերը չեն մշակում կամ մինչև այս տարի չեն մշակել: - Իմ պաշտոնավարման սկզբից նախ գոյքագրում կատարեցինք եւ անասնապահության, եւ դաշտավարության բնագավառներում՝ ճշտելու, թե ինչ ունենք, ասենք՝ քանի տնտեսություն ունենք, որ հինգ գլուխ խոշոր ունի, քանիսը՝ տասը եւ այդպես շարունակ: Հողօգտագործման ոլորտում ով ինչքան տարածք է մշակում: Եվ դրանից ելնելով՝ սկսում ենք ֆերմերների հետ նոր հարաբերություններ ձևավորել: - **Այնուամենայնիվ, կա գյուղացիության մի խավ, որ իրեն պատկանող հողերը չի մշակում:** - Մարզի հողերի 40 տոկոսն այս պահին չի մշակվում՝ մասնավորապես բարձրագիր գոտում: Պատճառներից մեկը համապատասխան գյուղտեխնիկայի բացակայությունն

է: Ուստի խնդիր ենք դրել երբեմնի մեքենատրակտորային կայանները վերականգնել: Կառավարությունը հավանություն է տվել այդ մտահղացմանը, լուծել ֆինանսավորման խնդիրը: Հիմա մեզինք պահանջվում է մասնագետ, ով կկազմակերպի գործը: - **Նշում եք, որ հողերի 40 տոկոսը չի մշակվում: Նշեցիք պատճառներից մեկը, ուրիշ ի՞նչ պատճառ կա՞ գյուղացին փող չունի, թե՞...** - Կարծում եմ՝ հիմնական պատճառն անհրաժեշտ տեխնիկայի պակասն է, ինչպես ասացի: Մեր ունեցած տեխնիկայով հնարավոր չէ այդ հողերը մշակել: Քսան տարի է՝ դրանք չեն մշակվում: Բարձրագիր գոտու հողերը մշակելու համար նույնիսկ սերմացու են առաջարկել: Բայց սերմացուն չէ խնդիրը, այս պահին մշակող տեխնիկա չունենք: Նախեսառաջ հզոր տեխնիկայի խնդիրը պիտի լուծենք...

- **Եվ վերջին հարցը. սկսվել է ոռոգման տարեշրջանը: Կառուցվածքային փոփոխություններ եղան հանրապետության, նաև մարզի ոռոգման համակարգում: Ի՞նչ է տալու այդ փոփոխությունը:** - Անկեղծ ասած՝ իմ սրտով չէ կառուցվածքային այդ փոփոխությունը: Ձարմացա, թե կառավարությունն ինչու մտած փոփոխություն ձեռնարկեց: Մասնավոր՝ ոռոգելի հողատարածություններն առավելապես Սիսիանի եւ Գորիսի համայնքներում են: Կապանում եւ Մեղրիում սակավ են ոռոգման ենթակա հողատարածքները: Ինչպես, սկսվել են ոռոգման ցանցի նորոգման աշխատանքները, մինչև հունիս կվերացվեն առկա վթարները, բայց նոր ցանցի կառուցման վերաբերյալ դեռևս ծրագիր չկա: **Ջրույց՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

## Վախճանվել է Ակսել Բակունցի տուն-թանգարանի հիմնադիր փնտրեն Քաջիկ Միքայելյանը

Գրականագետ, բանաստեղծ Քաջիկ Արսենի Միքայելյանը (Դորունց) ծնվել է 1939թ. մարտի 11-ին, Գորիս քաղաքում:



Ավարտել է Գորիսի թիվ 2 միջն դպրոցը (1956թ.), ապա՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է Գորիսի շրջանային «Ձանգեզուր» թերթում, Հալիծորի ութամյա դպրոցում՝ տնօրեն, Գորիսի քաղաքի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ, Գորիսի քաղաքի «Բանբեր Գորիսի» թերթի խմբագիր: 1968-2011թթ. (ընդհատումով) աշխատել է իր իսկ հիմնադրած՝ Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն: Հեղինակել է Ակսել Բակունցին նվիրված մի շարք գրականագիտական հոդվածներ ու գրքեր, «Նժույզս մնաց» բանաստեղծությունների ժողովածուն: Քաջիկ Միքայելյանի կյանքի ամենամեծ եւ մնայուն գործը, անտարակույս, Ակսել Բակունցի տուն-թանգարանի հիմնադրումն է: «Այունյաց երկիր» թերթին

տված հարցազրույցում (7 հունիսի 2007թ.) այդ առիթով ասել էր՝ «1968-ի հունիսյան մի օր ինձ կանչեցին Գորիսի հյուրանոց: Իսկույն գնացի եւ այնտեղ հանդիպեցի Սեդր Խանգաղյանին ու Բակունցի որդուն՝ Սեւադա Բակունցին: Նրանք երեւանի պետական լսարանում հանդիպել էին Հրանտ Թամրազյանին, Էդվարդ Ջրբաշյանին, այլ գրականագետների եւ հայտնել Գորիսում Ակսել Բակունցի տուն-թանգարանի հիմնադրելու գործը կազմակերպող մեկին գտնելու ցանկության մասին: Գրականագետները միաձայն տվել էին իմ թեկնածությունը: Ինչ ասեմ՝ հյուրանոցում առանց վարանելու համաձայնեցի, որովհետեւ սերս շատ վաղուց էր արթնացել Բակունցի ստեղծագործության հանդեպ: Պատկերացնում էի նաև դժվարությունները, որովհետեւ Բակունցը հայ գրականության այն դեմքերից է, ով մինչև կյանքի ավարտը հավատարմորեն ենթարկվեց: Բացի դրանից, նույնիսկ շատ մարդիկ, ովքեր մի լուսանկար են ունեցել կամ գրողի մի գիրքը թաքուն պահել, իրենց կյանքի գնով են հատուցել: Գիտե՞ի՞ ինչ է սպասվում, բայց սկսեցի հավաքական աշխատանքը, երկու տարվա նախապատրաստական աշխատանքների շնորհիվ ահագին փաստական նյութ հավաքեցի, եւ 1970-ին հանդիսավոր պայմաններում թանգարանը բացվեց: «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմն էր փաստացի մահվան առիթով եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին: **«Այունյաց երկիր»**

## Այլևս մեզ հետ չէ Սաֆար Եղիազարյանը

Երկրային կյանքին հրաժեշտ է տվել մեր թերթի բարեկամ, հին օրերի հանգույն բնորոշմամբ՝ թերթի արտահաստիքային թղթակից Սաֆար Եղիազարյանը, մի անձնավորություն, որին հատուկ էին շիտակությունը, անմիջականությունը, մարդամոտությունը:



Սաֆար Անտոնի Եղիազարյանը ծնվել է 1934 թվականի օգոստոսի 17-ին, Ղափանի շրջանի Չեյվա (այժմ՝ Դավիթբեկ) գյուղում: Յոթնամյակն ավարտելուց հետո սովորել է ավարտել է Գորիսի մանկավարժական ուսումնարանը, որից հետո անցել գինվորական պարտադիր ծառայության: Չորսըսնամյա ծառայությունից հետո աշխատել է ակունքի վարիչ, այնուհետև 1959-ից մինչև 2005-ը քիմիա-կենսաբանություն է դասավանդել գյուղի կրթօջախում՝ աշխատանքին զուգընթաց ավարտելով Երևանի գյուղատնտեսական եւ Վանաձորի մանկավարժական ինստիտուտները: Թաքուն մի նպատակ ու-

ներ՝ շարունակել ուսումը, սովորել ասպիրանտուրայում, բայց... Սաֆար Եղիազարյանը կայուն գիտելիքներ ավանդելով իր սաներին՝ նրանց մեջ սերմանում էր նաև ճշմարիտ ապրելու արվեստի հունդեր: Ուշագրավ էր, որ առօրյա կյանքում ոչ մի խտուղի երևույթ չէր վրիպում նրա աչքից, քիչ չեն եղել դեպքերը, երբ թղթին է համընկել իր մտահոգությունը եւ ներկայացրել մարզային թերթի խմբագրությանը: Իր թղթակցություններով փորձում էր հայրենի գյուղի պատմությունը, մարդկանց ու կենցաղը նկարագրել, ներկայացնել ժամանակակից սերունդին: Չափազանց ուշադիր էր շրջապատի հանդեպ, ջանում էր ինչ-որ կերպ օգտակար լինել կողքին, դատապարտում էր ստախոսին, կեղծավորին, զազարխոսին: Գյուղի կրթօջախի տնօրեն Բայանդուր Պողոսյանը նրան անվանել էր գերագնիվ մարդ: Կրթել ու դաստիարակել է չորս գավակ, ովքեր հարգանք են վայելում շրջապատում: Սաֆար Եղիազարյանն իր խոսքով ու գործով միշտ կմնա ապրողների հիշողության մեջ: **«Այունյաց երկիր»**

**ԿՈՐԵԼ Է** Կապանի պետական երաժշտական ուսումնարանի 2004-05 ուստարվա շրջանավարտ Լիլիթ Ռաֆայելի Մեղրյանի AK 034887 դիպլոմը: Համարել անվավեր:



# ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՄԱԼՍԱՐԱՆ



Հայտարարվում է 2017/2018 ուստարվա առկա ուսուցման ընդունելությունը՝ հետևյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտություններ	Ընդունելության քանությունները			Ընդունելության տեղ/այդ թվում			ՌԻ. վարձը (հազ. դրամ)	
	Մրցութային	Ոչ մրցութային	Ուղղակի	ան վճար	վճարովի ԱՏ	ընդամենը		
Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	15	17	220
Իրավագիտություն	Հլ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		-	25	25	420
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	15	17	220
Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	15	17	300
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օ տլ(գ) կամ ԸՊ(գ)		Հլ(գ)*	2	20	22	300
Հայոց լեզու և գրականություն	Հլ(գ)	Հլ(գ)			2	20	22	260
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլ(գ)	Մ(գ)**			2	30	32	270
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)		Հլ(գ)*	2	20	22	340
Կերպարվեստ	Գծն	Գն		Հլ(գ)*	1	20	21	270
Կառավարում (ըստ ուղղուի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		1	25	26	350
Էլեկտրոնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	20	22	220

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ա/թ. մայիսի - 5 ից մինչև հունիսի 1-ը, ժամը 18:00-ն: Գործընկերների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հունիսի 2-ը:

- Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝
- ա) Լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ աստատատ կամ դիպլոմ),
  - բ) 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
  - գ) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին,
  - դ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
  - ե) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայություն անցած լինելու, ծառայության վայրի եւ ծառայողական բնութագրի մասին,
  - զ) արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (զինծառայող ծնողի գոծվելու, 1-ին կամ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
  - է) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ) դիպլոմներ,
  - ը) փաստաթղթերի ընդունման եւ ձեւակերպման համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:
- Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 077802277: Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 2:

ԸՆԿՐՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԾՈՐՈՎ

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«Թունել» փակ բաժնետիրական ընկերությունը Մեղրու փարածաշրջանում գտնվող «Լիճքվազ» հանքավայրի շինարարությունում աշխատելու համար աշխատանքի է հրավիրում հետևյալ մասնագետներին:**

1. հորատողներ,
2. պայթեցնողներ/վկայականի առկայությամբ,
3. ամրակապողներ,
4. ստորգետնյա մեքենաների մեքենավարներ,
5. ստորգետնյա էլեկտրափականագործներ,

6. եռակցողներ:  
Աշխատանքային փորձը պարտադիր է: Աշխատանքներն իրականացվելու են վախտային եղանակով:  
Գիշերելու եւ սննդի ծախսերն ընկերության հաշվին է, որը կազմակերպվում է տեղում:  
Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել հետևյալ հասցեով՝ Անդրկավան 2/10:  
Հեռախոսներ՝ 098-20-83-05, 098-20-83-11, 098-20-83-25, 077-20-83-25:  
**Աշխատանքների սկիզբը 2017թ. մայիսի 1-ից:**  
**«Թունել» ՓԲԸ փնտրելություն**

## Տեղ գյուղում 2ախմապի դպրոց

Այունիքի մարզի Տեղ գյուղում այլևս 2ախմատի դպրոց ունի: Գյուղի 2ախմատի ֆեդերացիա-Սյունիքի մարզպետարան-Տեղ համայնք համագործակցության շնորհիվ գյուղի երեխաներն այսուհետ կարող են ավելի հմտանալ ամենատարածաբանական խաղի՝ շախմատի մեջ: Ծախմատիստ, գրոսմայստեր, Հայաստանի քառակի չեմպիոն Սմբատ Լպուտյանը, ով ներկա էր դպրոցի բացման արարողությանը, բնակիչների հետ շախմատ խաղալուց հետո նշեց, որ գյուղը բավականին մեղմ ունի, եւ հույս հայտնեց, որ դպրոցում ուսանելուց հետո շախմատիստների թիվն անպայման կավելանա: Գյուղի թիվ 2 դպրոցի տնօրեն Գյուլնարա Ջհանգիրյանը նույնպես կարեւորեց դպրոցի առկայությունը համայնքում եւ ավելացրեց, որ Տեղի բնակիչները միշտ աչքի են ընկել իրենց մաթեմատիկական ունակություններով, ինչն անպայման կդրսեւորվի շախմատի նորաբաց դպրոցում եւս:

Սեփ. Լրատվություն

## Հիմքում բարեգործությունն է



### «Կապան մոլ» առևտրի կենտրոնի բարեգործական հարկաբաժնում ապրիլի 15-ին «Հուտ ձեռքեր» խորագրով ցուցահանդես-վաճառք էր կազմակերպվել:

Ցուցահանդես-վաճառքը նախածեղծել էին հաշմանդամ եւ անապահով երեխաների պաշտպանության «Հուտ երիցուկ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Գրիգորի Հարությունյան) եւ «Ջինիշյան» ինչպես նաեւ հիմնադրամի Կապանի գրասենյակը (համակարգող՝ Էռնա Արզումանյան): Օրինելով ցուցահանդեսի բացումը՝ Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը նշեց, որ նման միջոցառումները նպաստում են դեռահասների զեղազիտական դաստիարակությանը եւ իրենց հիմքում բարեգործական նշանակություն ունեն, քանզի երեխաներն իրենց երեւակայությամբ, կարողությամբ, Աստուծո տված շնորհով փորձում են օգտակար լինել իրենց նմա-

նին: Ցուցահանդեսում ձեռագործ աշխատանքներ էին գործել նաեւ գեղանկարներ, ձեռքի աշխատանքներ, որոնց հեղինակները Կապանի տարբեր դպրոցների աշակերտներ են: Աշխատանքներ էին ներկայացրել նաեւ Քաշաթաղի շրջանի Կերեմի եւ Գեղիի դպրոցները, Կապանի թիվ 3 հատուկ դպրոցը, երեխաների խնամքի եւ պաշտպանության Կապանի գիշերօթիկ հաստատությունը: Կապանի թիվ 3 հատուկ դպրոցի տաղավարում կրթօջախի սան Ռոզա Գրիգորյանը դազահի վրա կարպետ էր գործում: Կարել էր տեսնել, թե ինչպես էր նախ առ նախ ծնվում կիրառական արվեստի այդ նմուշը: Կապանի թիվ 10 միջն. դպրոցը ներկայացրել էր ռոբոտտեխնիկական սարքերի նմուշներ: Ցուցահանդեսի կազմակերպիչները խոստացան, որ նման միջոցառումները շարունակական կլինեն:

ԿԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

**Այունյաց երկիր**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԵՍ ԱՆԽԱՐԳ» ՍԱՀՄԱՆՍԵԿ ՊԱՏԱՆԱՏՎՈՒԹՅԱՒ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՊՆՏՆԱԿԱՆ ԱՎՅԱԿՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՎՈՐՈՒՄ: Գրանցման վկայական՝ ՕՄՍ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական օջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1730, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.04.2017թ.: